

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2016 թվականի N 409-Ա

### ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնիի համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 2-ի N 2 որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնիի համայնքի սեփականությունը հանդիսացող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերից Մեծ Պարնի, 24-րդ փողոց, N 5/2 հասցեում գտնվող՝ 0,0705 հեկտար մակերեսով և 156510 դրամ կադաստրային արժեքով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 26012016-06-0026, հողամասի կադաստրային ծածկագիրը՝ 06-075-0297-0039) որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականություն և այն ամրացնել «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքի կառուցման ու սպասարկման նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնիի համայնքի ղեկավարի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրաբերության պայմանագիր.

2) ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հանձնման-ընդունման և գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքները՝ այն իրականացնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնիի համայնքի միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Հ. Աբրահամյան

2016 թ. ապրիլի 27  
Երևան